Հավելված N 7.

2022թ. « Ապրիլ » « 01 »

N «Դ Տ Պ -1160-11012/Ե -2» պայ մ ան ագ ր ի

Ծրագրի եռամսյակային հաշվետվություն

Միջոցառման անվանումը՝ «Աուտիզմ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցության ցերեկային կենտրոն»

Համառոտ բովանդակությունը՝ Ծրագրի նպատակն է սոցիալ-հոգեբանական, զբաղվածության և խնամքի ծառայություններ տրամադրել աուտիզմի համախտանիշ ունեցող անձանց: Ծրագրի մեթոդաբանության հիմքում ընկած են Կիրառական Վարքային Վերլուծության («ABA») այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են Մանր քայլերով ուսուցումը (Discrete Trial Training), Բնական միջավայրում ուսուցումը (NLP), Խոսքային վարքը (Verbal Behavior): Կիրառվում է նաև («TEACH») մեթոդը, զբաղվածության թերապիաները, որոնք ներդրվել են Գերմանիայի փորձի հիման վրա Մարիա Կոմենսկի (Autismus Deutschland հիմնադիր) անմիջական աջակցությամբ, ինչպես նաև հասարակության մեջ ներառման և սոցիալականացմանն ուղղված ծրագրերը, որոնք հնարավորություն են տալիս ներգրավվելու հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

Ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքները նպաստում են ոչ միայն շահառուների կյանքի որակի բարելավմանը, հասարակական կյանքում նրանց ակտիվ մասնակցությանը, այլ նաև տարիների ընթացքում իրականացված բոլոր ոլորտների խթանմանն ուղղված աշխատանքների արդյունքների պահպանմանը և իհարկե տարաբնույթ աշխատանքային հմտությունների և կարողությունների ուսուցանմանը:

Հաշվետու ժամանակաշրջան՝ Հունվար, Փետրվար, Մարտ

	«Խնամք և սոցիալ-վերականգնողական ծառայություններ ցերեկային կենտրոնում» ծրագրի շրջանակներում իրականացված գործողություններ				
	Իրականացված գործողություններ (1)	**Ակնկալվող արդյունքներ (2)**	**Գնահատման չափանիշները և հիմնավորող փաստաթղթեր (3)***	**Փաստացի մատուցած ծառայություններ (4)**	**Մեկնաբանություն (5)**
1.	Կազմակերպության տնօրինության, ծրագրի ղեկավարների և ավագ մասնագետների կողմից ճշգրտվել է շահառուների ցանկը:	Նախապատրաստական և ընթացիկ աշխատանքների պլանավորում և իրականացում:	Արդյունքում կազմվել են. ✓ Շահառուների (Լոտ 2.) ցանկը՝ (Հավելված 1.), ✓ Շահառուների հաճախումների գրանցման մատյանը:	Խնամք և սոցիալ-վերականգնողական ծառայություն:	
2.	Ծրագրի ղեկավարի և մասնագետների կողմից պատրաստվել է դասացուցակ, որի հիման վրա շահառուները	Ծրագրում նկարագրված ախատանքների իրականացում համաձայն նշված դասացուցակի:	Արդյունքում կազմվել է. ✓ Միջոցառումների օրակարգը՝ դասացուցակը (Հավելված 2.)	Ծրագրին ներառված շահառուները ըստ եռամսակային դասացուցակի շաբաթվա կտրվածքով ստացել են հետևյալ ծառայությունները.	Դասացուցակը նախատեսված է աշխատանքային օրերի (Երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշքբթի,

	ներառվել են ծրագրի իրականացման ը:			✓ Երաժշտաթերապիա – 83 խմբային և 4 անհատական պարապմունքներ, ✓ Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա – 50 խմբային պարապմունք, ✓ Լոգոպեդական ծառայություն – 29 անհատական և 25 խմբային պարապմունք, ✓ Արտթերապիա – 37 անհատական և 19 խմբային պարապմունք, ✓ Կավաթերապիա – 41 անհատական և 13 խմբային պարապմունք, ✓ Կինեզիոթերապիա – 29 անհատական և 26 խմբային պարապմունք, ✓ Այգեգործություն – 18 անհատական և 5	հինգշաբթի, ուրբաթ) համար:

				խմբային պարապմունք, ✓ Զբաղվածություն՝ կարուձև - 32 անհատական և 15 խմբային պարապմունքներ: ✓ Հեքիաթի ժամ – 18 անհատական և 31 խմբային պարապմունք, ✓ Էրգոթերապևտիկ ծառայություններ, ձեռք բերված գիտելիքների ամրապնդմանն ու ընդլայնմանը ուղղված, ինչպես նաև զբաղվածության ապահովմանն ուղղված տարբեր հմտություններ զարգացնող խմբակներ և մասնագիտական կողմնորոշման ծառայություններ շաբաթվա	

				կտրվածքով մոտ 160 խմբային պարապմունք:	
3.	Պատրաստվել են դիմումները և վերանայվել են ուսումնառության պայմանագրերը:	Կնքվել են շահառուների ծնողների և կազմակերպության միջև ուսումնառության պայմանագրերը, ինչպես նաև ծնողների կողմից ստորագրվել են դիմումները, որոնց համաձայն շահառուները ներառվել են իրականացվող աշխատանքներին:	Արդյունքում ծրագրին ներառված շահառուների ծնողների և կազմակերպության միջև ստորագրվել են. ✓ Դիմումները (2022 թ. ծրագրին ներառվելու վերաբերյալ), (Հավելված 3.), ✓ Ուսումնառության պայմանագրեր (Հավելված 4.):		Ուսումնառության պայմանագրերը կնքվել են 2 օրինակից: Ուսումնառության պայմանագրի մեկ կնքված, ստորագրված օրինակը տրվել է շահառուի ծնողին կամ խնամակալին, իսկ 2-րդ օրինակը տեղադրվել է առուտիզմի համախտանիշ ունեցող շահառուի համար նախատեսված անձնական գործերի՝ թղթապանակի մեջ: Անձնական գործերի թղթապանակի մեջ

					են տեղադրված նաև ծրագրին ներառվելու շահառուի ծնողի կամ խնամակալի կողմից ստորագրված դիմումները:

4.	Հաջորդիվ իրականացվել է կարիքների և կարողությունների գնահատում կամ վերագնահատում բազմամասնագիտական թիմի՝ գնահատում իրականացնող որակավորված մասնագետների՝ վարքային թերապիստի, հոգեբանի, լոգոպեդի, էրգոթերապիստի կողմից:	Շուրաքանչյուր շահառուի համար հստակ դրվել են նպատակադրումները, որոնց ձևավորման և զարգացման շուրջ իրականացվել են աշխատանքներ:	Արդյունքում կազմվել է. ✓ Անհատական սոցիալ-վերականգնողական զարգացման ծրագրերը՝ (նպատակադրումները) 50 շահառուի (Լոտ 2.) համար (Հավելված 5.):		Դիտարկման արդյունքում յուրաքանչյուր շահառուի այս կամ այն հմտության ձևավորման և զարգացման համար մասնագետների կողմից առանձնացվել է նվազագույնը 3 նպատակադրում, որոնց շուրջ իրականացվել են նպատակաուղղված աշխատանքներ:

5.	Շահառուների ծնողների հետ մասնագետների կողմից իրականացվել են խորհրդատվություններ:		Մասնագետների կողմից խորհրդատվություններ են իրականացվել նաև շահառուների ծնողների հետ նրանց ուղղորդելու համար ուղեգրերի ստացման ընթացակարգերի և ծագած դժվարությունների վերաբերյալ:	1.Խորհրդատվություններ. ✓ Լոգոպեդ – 23 ծնող, ✓ Հոգեբույժ – 10 ծնող, ✓ Ավագ մասնագետներ – 45 ծնող:	Միաժամանակ նաև իրականացվել է փորձի փոխանակում կազմակերպության աշխատողների՝ հոգեբույժի, վարքային թերապիստների հետ:
6.	Էրգոթերապևտիկ ծառայություն:	Զևավորել և զարգացնել շահառուների ինքնասպասարկման, կենցաղավարման հմտությունները:	Այս ուղղությամբ աշխատանքները իրականացվել են կենտրոնում գործող դասացուցակի համաձայն (Հավելված 2.):	Շաբաթվա կտրվածքով մասնագետները իրականացրել են բազմաթիվ անհատական և խմբային էրգոթերապևտիկ աշխատանքներ:	Կենտրոնում շահառուների հետ աշխատանքներ են իրականացրել հետևյալ մասնագետները՝ հոգեբան, լոգոպեդ, հատուկ մանկավարժ, սոցիալական աշխատող, ադապտիվ ֆիզիկական

					կուլտուրայի մասնագետ, մասնագիտական ուսուցման խմբավար, կինեզոթերապիստ, աշխատանքային թերապիայի մասնագետներ: Աշխատանքները իրականացվել են խմբային և անհատական պարապունքների միջոցով: Սաները խմբավորվել են ըստ տարիքի, /մտավոր/ հմտությունների և կարողությունների, ֆունկցիոնալ գործունեության մակարդակի և հետաքրքրությունների, յուրաքանչյուր

					խմբում 8-9 շահառու:
7.	Լոգոպեդական ծառայություն:	Լոգոպեդական աշխատանքները ուղղված են. ✓ Զնավորելու և զարգացնելու հաղորդակցման հմտությունները: Այդ նպատակով կիրառվում են հետևյալ մեթոդները՝ ✓ PECS (Պատկերների Փոխանակման Հաղորդակցման համակարգ), ✓ PODD (համակարգերի ներդրում):	Այս ուղղությամբ աշխատանքները իրականացվել են կենտրոնում կիրառվող դասացուցակի համաձայն (Հավելված 2.): Լոգոպեդի կողմից կազմվել է. ✓ Առնվազն 30 շահառուի «Խոսքի հետազոտման քարտ» (Հավելված 6.), ✓ Լոգոպեդական ընթացիկ՝ գնահատման թերթիկ (Հավելված 7.):	Ըստ դասացուցակի լոգոպեդը իրականացրել է անհատական և խմբային լոգոպեդական պարապմունքներ:	Ելնելով շահառուների անհատական և տարիքային առանձնահատկություններից կատարվել է սաների ճիշտ խմբավորում լոգոպեդական աշխատանքների իրականացման համար:

8.	Վարքային թերապիա:	«Կիրառական Վարքային Վերլուծության» մեթոդի կիրառումը հնարավորություն է տալիս. ✓ Բարելավել բոլոր շահառուների կյանքի որակը, ✓ Նվազեցնել, փոփոխել և ի վերջո բացառել բացասական՝ խոչընդոտող վարքային դրսևորումները, ✓ Միաժամանակ նպաստել բոլոր շահառուների դրական վարքաձևերի ձևավորմանն ու ամրապնդմանը:	Այս ուղղությամբ աշխատանքները իրականացվել են կենտրոնում ծառայություններ իրականացնող վարքային թերապիստների, ինչպես նաև տարաբնույթ թերապիաներ իրականացնող մասնագետների կողմից: Առնվազն 20 շահառուի համար կազմվել է. ✓ Վարքային պլան, ✓ Վարքի դիտարկման և գնահատման թերթիկներ (Հավելված 8.):	Կազմակերպություն հաճախող շահառուների վարքային դրսևորումների հաղթահարմանն ուղղված աշխատանքների իրականացում և այս ուղղությամբ տարեվերջյան հաշվետվություններ ի կազմում:	ԿՎՎ մեթոդի համաձայն կիրառված միջամտություններ ի արդյունքում շահառուները ձեռք են բերում նոր գիտելիքներ, հմտություններ, ինչպես նաև հնարավորություն են ստանում կիրառել դրանք հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

9.	Հատուկ կրթություն՝ նախկինում ձեռք բերված գիտելիքների պահպանում, ամրապնդում և ընդլայնում:	Իրականացված աշխատանքները նպաստում են. ✓ Գիտելիքների, ճանաչողական հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը, ✓ Տեսա-տարածական ընկալումների ձևավորմանն ու զարգացմանը, ✓ Մաթեմատիկական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, ✓ Մանր մոտորիկայի ձևավորմանն ու զարգացմանը, ✓ Ընթերցանության գործընթացի ձևավորմանն ու զարգացմանը, ✓ Համակարգչային հմտությունների	Գնահատումն իրականացվել է շահառուների համար նախատեսված աշխատանքային թերթիկների կիրառման միջոցով:	Ըստ դասացուցակի հատուկ մանկավարժների և վարքային թերապիստների կողմից իրականացվել են. ✓ Անհատական պարապմունքներ, ✓ Խմբային պարապմունքներ:	Այդ նպատակով կիրառվել են մի շարք մեթոդներ՝ «Կիրառական վարքային վերլուծություն» (ABA), «Treatment and Education for Autistic and related Communication»՝ (TEACH): Մասնագետների կողմից նկարագրված աշխատանքներին զուգահեռ պատրաստվել են համապատասխան դիդակտիկ նյութեր, սոցիալական պատմություններ:

		ձևավորմանն ու զարգացմանը: Շահառուները հնարավորություն կստանան ձեռք բերված գիտելիքները կիրառել հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:			

10.	Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա, կինեզոթերապիա:	Մարզիչների կողմից խմբային և անհատական իրականացված պարապմունքները նպաստում են շահառուների ընդհանուր մոտորիկայի զարգացմանը՝ ճկունության ձեռքբերմանը, ստատիկ և դինամիկ հավասարակշռության ձևավորմանն ու պահպանմանը:	Կիրառվել է Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի և կինեզոթերապիայի շրջանակներում իրականացված աշխատանքներին համապատասխան յուրաքանչյուր շահառուի համար աշխատանքային թերթիկներ:	Ըստ դասացուցակի շաբաթվա կտրվածքով իրականացվել են. ✓ Անհատական պարապմունքներ, ✓ Խմբային պարապմունքներ:	Մարզիչների կողմից իրականացված պարապմունքներին կցված են եղել նաև խմբում աշխատող մյուս մասնագետները, որոնք օգնել են մարզիչներին՝ կատարելու իրենց հիմնական աշխատանքները:
11.	Զբաղվածության ապահովում տարբեր հմտություններ զարգացնող խմբակների և մասնագիտական կողմնորոշման ծառայությունների	Ծրագրի շրջանակներում իրականացված՝ փայտագործության, կավագործության, բացիկների պատրաստման, մոմագործության, կարուձևի, գորգագործության, երաժշտաթերապիայի, օգտագործված թղթի	Կիրառվել է յուրաքանչյուր հմտությանը համապատասխան աշխատանքային գրանցման թերթիկներ:	Ըստ դասացուցակի խմբային և անհատական պարապմունքների միջոցով իրականացվել է փայտագործության, կավագործության, բացիկների պատրաստման, մոմագործության,	Իրականացված աշխատանքները ի վերջո նպաստում են աուտիզմի համախտանիշ ունեցող դեռահասների և երիտասարդների առավելագույն ինքնուրույնությանը, հասարակության մեջ ներառմանը:

	իրականացման միջոցով:	մշակում, արտթերապիայի, համակարգչային ուսուցման և այլ հմտությունների՝ այգեգործության, խոհարարական հմտությունների ուսուցանում՝ ձևավորում և զարգացում:		կարուձևի, գորգագործության, երաժշտաթերապիայի, արտթերապիայի, համակարգչային ուսուցման հմտությունների ձևավորում և զարգացում:	
12.	Ազատ ժամանցի և մշակութային միջոցառումների կազմակերպում, իրականացում:	Իրականացվող աշխատանքները նպաստում են աուտիզմի համախտանիշ ունեցող դեռահասների և երիտասարդների անհրաժեշտ սոցիալական հմտությունների, ընդունելի սոցիալական նորմերի, հաղորդակցման հմտությունների	Եղանակային պայմաններից ելնելով մասնագետների կողմից իրականացվել են զբոսանքներ «ԻՄ ՈՒՂԻՆ» ուսումնավերականգնողական և մասնագիտական ուսուցման ցերեկային կենտրոնին մոտ գտնվող այգում և դեպի խանութ՝ անհրաժեշտ գնումներ կատարելու նպատակով (Հավելված 9.):	Հաշվետվությանը կցված է Հավելված 7-ը, որտեղ ներկայացված են երեք ամիսների ընթացքում մասնագետների կողմից իրականացված նշված ուղղություններով սոցիալիզացիայի ծրագրերը:	Վերոնշյալի արդյունքում աուտիզմի համախտանիշ ունեցող դեռահասները և երիտասարդները դառնում են հնարավորինս ինքնուրույն և առավելագույնս ներառված հասարակության մեջ:

		ձևավորմանն ու զարգացմանը:			
13.	Մշակութային միջոցառում:	Իրականացվող մշակութային միջոցառումները ապահովում են շահառուների հանգստի և ժամանցի իրավունքի իրացումը՝ նպաստելով առուիզմի համախտանիշ ունեցող դեռահասների և երիտասարդների ինքնաարտահայտմանը, ինքնադրսևորմանը, հասարակական կյանքում ակտիվ մասնակցության ցուցաբերմանը:	Կազմակերպվել և հետաքրքիր ու բովանդակալից իրականացվել են կազմակերպության ներսում 2 միջոցառում:	Կազմակերպվել է 2 մշակութային միջոցառում. ✓ 2022թ. հունվար 21-ին, ✓ 2022թ. հունվար 31-ին:	Կազմակերպությունը հյուրընկալել էր սաների կողմից շատ սիրված «Hope for Coffe» խմբին: Համերգի ընթացքում ելույթ են ունեցել նաև «Իմ Ուղին» ուսումնավերականգնողական և մասնագիտական ուսուցման ցերեկային կենտրոնի սաները:

14.	Կազմակերպության ներսում Աստվածաշնչյան ընկերության հետ համագործակցության արդյունքում սաների հետ իրականացվում են ուսուցողական խմբակներ:	Իրականացված միջոցառումը նպաստում է սաների գիտելիքների ձեռքբերմանն ու ընդլայնմանը, շփման կարողությունների և հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը:	Եռամսյակային հաշվետվության վերջում կցված են իրականացվող նշված միջոցառման վերաբերյալ հավաստող նկարները:	2022 թվականի փետրվարից առ այսօր ամեն երեքշաբթի 30 րոպե տևողությամբ իրականացվում է խմբային (5-8) աշխատանք և զրույց Աստվածաշնչի վերաբերյալ:	Աստվածաշնչային ընկերությունը ի դեմս Սրբուհի Մակարյանի կողմից ղեկավարած խմբի ծրագիր է իրականացվել «Իմ Ուղին» ուսումնավերականգնողական և մասնագիտական ուսուցման ցերեկային կենտրոնի սաների հետ:
Ընդամենը շահառուներ՝ 50 շահառու (Լոտ 2.):					
Ազդեցությունը՝ ‹‹Աուտիզմ ազգային հիմնադրամ››-ի «Իմ Ուղին» ուսումնավերականգնողական և մասնագիտական ուսուցման ցերեկային կենտրոնում իրականացված աշխատանքները. ✓ Աջակցություն են ցուցաբերում աուտիզմի համախտանիշ և զարգացման այլ խանգարումներ ունեցող դեռահասներին, երիտասարդներին, ինչպես նաև նրանց ընտանիքներին,					

- ✓ Փորձառու մասնագետների կողմից իրականացվում են զբաղվածության զանազան ծրագեր,
- ✓ Ստեղծում են անհրաժեշտ պայմաններ կրթական, վերականգնողական աշխատանքների իրականացման համար,
- ✓ Ապահովում և իրականացնում են մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքներ,
- ✓ Աուտիզմի համախտանիշ և զարգացման այլ խանգարումներ ունեցող դեռահասների, երիտասարդների ծնողների համար իրականացնում են մասնագիտական իրազեկում,
- ✓ Ապահովում և իրականացնում են հասարակության մեջ ներառմանն ուղղված տարաբնույթ ծրագրեր:

ՀԱՎԵԼՎԱԾ